ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2016 թվականի No73

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝

համայնքի ավագանին ***որոշում է***

հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի № 16 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի «Մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ում ջեռուցման համակարգ անցկացնելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2017 թվականի աղբահանության սխեման և ժամանակացույցը հաստատելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ղեկավարի 2017 թվականի կամավոր լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բնակիչ Օլեգ Առաքելյանին վիրահատության համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին:

Կողմ 10 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2016 թվականի No74-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի պահանջներով՝
համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի:

Կողմ 10 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2016 թվականի No75

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թվականի մայիսի 26-ի N550-ն որոշման 1 կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը, 3-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ սահմանված կարգի 6-րդ կետի պահանջները, ինչպես նաև, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին, Զովունի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող թիվ 07-029-0185-0038 ծածկագրի տակ գտնվող 0.45843 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքը ուղղակի վաճառքի միջոցով՝ հողատարածքի ամբողջ կադաստրային արժեքով՝ 1 քմ-ի համար 118.5 (հարյուր տասնութ ամբողջ հինգ տասնորդական) դրամ, որը 0.45843 հա մակերեսով հողամասի համար կազմում է՝ 543 240 (հինգ հարյուր քառասուն երեք հազար երկու հարյուր քառասուն) դրամ, օտարել հարակից թիվ 185-006-3 ծածկագրի տակ գտնվող 0.5 հա մակերեսով հողամասի սեփականատեր Նվարդ Երվանդի Հարությունյանին, նրան պատկանող գյուղատնտեսական նշանակության հողատարածքի ընդլայնման նպատակով: Նշված հողամասը շուրջ 60%-ով սահմանակից է ընդլայնվող հողամասին, առկա է միակ հարևան սեփականատիրոջ՝ Վալերիկ Բաղդասարյանի գրավոր համաձայնությունը, ինչպես նաև հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին, Զովունի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող թիվ 07-029-0143-0061 ծածկագրի տակ գտնվող 0.796 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքը ուղղակի վաճառքի միջոցով՝ հողատարածքի կադաստրային արժեքով՝ 1 քմ-ի համար 6.75 (վեց ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) դրամ, որը 0.796 հա մակերեսով հողամասի համար կազմում է՝ 53 730 (հիսուն երեք հազար յոթ հարյուր երեսուն) դրամ օտարել Եպրաքսյա Արմավելի Եփրեմյանին նրան սեփականության իրավունքով պատկանող թիվ 07-029-0143-0040 ծածկագրի տակ գտնվող 0.9906 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատարածքի ընդլայնման համար:

Նշված հողամասը շուրջ 60%-ով սահմանակից է ընդլայնվող հողամասին, առկա չէ հարևան սեփականատեր, ինչպես նաև հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Կողմ 10 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2016 թվականի No76

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-ՈՒՄ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բյուջեի 823-մշակութային տներ և ակումբներ հոդվածից Զովունի համայնքի «Մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ին տրամադրել ֆինանսական միջոցներ ջեռուցման համակարգ անցկացնելու համար:

Կողմ 10 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2016 թվականի No77

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19.1 կետի, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 25-Ն հրամանով հաստատված N2.1.7.002-09 «Սանիտարական կանոններ և նորմեր»-ի պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2017 թվականի աղբահանության սխեման և ժամանակացույցը համաձայն հավելվածի:

Կողմ 10 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 12-ի N՝ որոշման
Կ. Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքում աղբահանումը կատարվում է երկու մեքենա-մեխանիզմով՝

1. Մարատ Սիմոնյանը սպասարկում է հետևյալ փողոցները N40, 38, 39, 5, 4, 21, 22, 23, 24, 25, 7, 8, 9, 10, 11

2. Գևորգ Հովհաննիսյանը սպասարկում է N4, 5, 12, 13, 15, 16, 38, 39, 40, 21, 22, 23, 24, 25

6-րդ փողոցը կիսում է նշված փողոցները հավասար մասերի եթե շարժվենք դեպի արևմուտք 6-րդ փողոցի և N1 փողոցի խաչմերուկից ձախ կողմի սպասարկումը Մարատ Սիմոնյանն է կատարում, իսկ աջ մասի սպասարկումը Գևորգ Հովհաննիսյանն է կատարում:

Աղբահանությունը կատարվում է յուրաքանչյուր կիրակի օր ժամը 9^{00}-ից 18^{00}:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2016 թվականի No78

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ղեկավարի 2017 թվականի կամավոր լիազորությունների իրականացման կարգը համաձայն հավելվածի:

Կողմ 10 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի ավագանու 2016 թվականի
դեկտեմբերի 12-ի N 78 որոշման
Կ. Տ.

ԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ղեկավարի՝ (այսուհետ՝ համայնքի ղեկավար) կամավոր լիազորությունների (այսուհետ՝ լիազորություններ) իրականացման կարգը:

2. Լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է **«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն:**

3. **Կամավոր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են տվյալ տարվա** համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը համապատասխան:

4. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններ իրականացնում է հետևյալ բնագավառներում՝

<u>պաշտպանության կազմակերպման բնագավառ</u>

1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.
2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.
3) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

<u>քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ</u>

1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.
2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները.
3) կազմում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.
4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.
5) կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

հողօգտագործման բնագավառ

1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.
2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:

տրանսպորտի բնագավառ

կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը:

կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.
2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.
3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.
4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.
5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ

1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.
2) աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.
3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:

աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ

1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.
2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

5. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և բյուջետային հիմնարկների միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2016 թվականի No79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՕԼԵԳ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բնակիչ Օլեգ Առաքելյանին վիրահատության համար ցուցաբերել ֆինանսական աջակցություն 50000 /հիսուն հազար/ դրամի չափով:

Կողմ 10 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Էմիլ Ավուշյան
Արմեն Բարսեղյան
Արմենուհի Բաղդասարյան
Կարեն Խաչատրյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ